ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 16761 «19» 09 2016թ

ԵՊՀ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՆԵՐԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի պետական համալսարանի (այսուհետ՝ ԵՊՀ) ներքին կարգապահական կանոնների 41-րդ կետով սահմանված՝ աշխատողների աշխատաժամանակի հաշվառումը պատշաճ կարգով կազմակերպելու նպատակով

հ ր ա մ ա յ ո ւ մ ե մ.

1. ԵՊՀ որոշ տարակարգերի (վարչական, ուսումնաօժանդակ և ինժեներատեխնիկական) և խմբերի (պաշտոնների ցանկը սահմանվում է ԵՊՀ ռեկտորի հրամանով) աշխատողների աշխատաժամանակի հաշվառումն իրականացնել մատնադրոշմ կարդացող էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ էլեկտրոնային համակարգ) միջոցով:

2. Սահմանել, որ ԵՊՀ բոլոր աշխատողները, ում աշխատաժամանակի հաշվառումն իրականացվում է էլեկտրոնային համակարգի միջոցով պարտավոր են աշխատանքային օրվա սկզբին (աշխատավայր ներկայանալիս) և աշխատանքային օրվա ավարտին (աշխատավայրից հեռանալիս) գրանցվել տվյալ մասնաշենքում տեղադրված էլեկտրոնային համակարգի տերմինալների միջոցով:

3. Էլեկտրոնային համակարգի ներդրումն իրականացնել փուլային տարբերակով (յուրաքանչյուր փուլում ընդգրկելով համապատասխան մասնաշենքերի աշխատողներին)՝ միաժամանակ կատարելով համակարգի շահագործման արդյունավետության փորձարկում: Էլեկտրոնային համակարգի ներդրման յուրաքանչյուր նոր փուլը (նոր մասնաշենքերի ընդգրկումը) կամ նոր աշխատողների խմբերի ընդգրկումն իրականացվում է ԵՊՀ ռեկտորի հրամանով:

4. Էլեկտրոնային համակարգի շահագործման առաջին փուլն մեկնարկել 2016թ. հոկտեմբերի 10-ից ԵՊՀ կենտրոնական և գրադարանի մասնաշենքերում՝ ընդգրկելով այդ մասնաշենքերում տեղակայված ստորաբաժանումների վարչական, ուսումնաօժանդակ և ինժեներատեխնիկական տարակարգերի բոլոր աշխատողներին:

5. ԵՊՀ տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչությանը հանձնարարել ապահովելու էլեկտրոնային համակարգի ներդրման և շահագործման տեխնիկական աշխատանքները (համապատասխան սերվերի սպասարկումը), իսկ ԵՊՀ կադրերի բաժնին հանձնարարել երկշաբաթյա ժամկետում ապահովելու էլեկտրոնային համակարգում համապատասխան աշխատողների գրանցման և ընթացիկ շահագործման աշխատանքները:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ **Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ**